ՄԱՀ ՌՈԼԱՆԴ ԱՄԻՐԳՈՒԼՅԱՆԻ

Ծանր կորուստ կրեց Թբիլիսիի հայ համայնքը և քաղաքի Սուրբ Գևորգ եկեղեցուն կից Սուրբ Եղիայի անվան հայկական կիրակնօրյա դպրոցը:

Կարճատև հիվանդությունից հետո, քաղցկեղից, հոկտեմբերի 17-ին, իր բնակարանում մահկանացուն կնքեց տեղի հայ համայնքում սիրված և հարգված մտավորական, բազմավաստակ ուսուցիչ Ռոլանդ Վարդանի Ամիրգուլյանը:

Ռոլանդ Ամիրգուլյանը ծնվել է 1939 թ. սեպտեմբերի 25-ին, Թբիլիսիում, բանվորի ընտանիքում: Միջնակարգ կրթություն ստանալով Թբիլիսիում, այնուհետև ընդունվել է Ա. Ս. Պուշկինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի, գրականության և պատմության բաժինը:

1962-72 թթ. աշխատել է Վրաստանի Ծալկայի շրջանի Ղզլքիլիսա գյուղի միջնակարգ դպրոցում որպես հայոց լեզվի, հայ գրականության, պատմության և աշխարհագրության ուսուցիչ: 1972 թ. տեղափոխվելով Թբիլիսի, հայոց լեզու և հայ գրականություն է դասավանդել քաղաքի թիվ 109 միջնակարգ դպրոցում: 1974-89 թթ. որպես հայոց լեզվի և հայ գրականության մեթոդիստ է աշխատել նախ քաղաքային մեթոդկաբինետում, ապա Թբիլիսիի ուսուցիչների կատարելագործման ինստիտուտում:

1989 թվականից մինչև իր անժամանակ մահը աշխատում էր Վրաստանի Հանրապետության կրթության նախարարության գիտա-մեթոդական կենտրոնում որպես հայկական դպրոցների մեթոդիստ՝ միաժամանակ հայոց լեզու և գրականություն դասավանդելով թիվ 104 միջնակարգ դպրոցում:

Վրաստանի կրթության նախարարության կողմից պարգևատրվել է պատվոգրերով և «Ժողովրդական կրթության գերազանցիկ» կրծքանշանով:

1994 թ. դեկտեմբերի 4-ին երբ բացվեց Սուրբ Գևորգ եկեղեցուն կից Սուրբ Եղիա կիրակնօրյա դպրոցը, հայոց լեզու և հայ գրականություն սկսեց դասավանդել նաև նորաբաց այս կիրակնօրյայում:

Անողոք հիվանդությունը ֆիզիկապես ցնցեց, սակայն չկարողացավ հոգեպես ընկճել բազմավաստակ ուսուցչին: Նա մինչ իր երկրային կյանքի վախճանը ապրեց ուսուցչական նույն ոգիրումով և կրթական հոգսերով: Մահվանից մի քանի օր առաջ, ուժերի վերջին լարումով, հասցրեց լրացնել և ստորագրել իր սիրելի աշակերտների «Հրաժեշտ Այբբենարանին» հանդեսի վկայագրերը:

Ռոլանդ Ամիրգուլյանի վախճանման լուրը ոչ միայն խոր վիշտ պատճառեց Թբիլիսիի հայ համայնքին, այլև քաղաքի մտավորականությանը: Թաղման կարգը կատարեց Թբիլիսիի հայոց հոգևոր դասը՝ նախագահությամբ Վիրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ արքեպս. Սերադարյանի:

Սիրված և հարգված ուսուցչի հուղարկավորությանը, հարազատներից և ընկերներից բացի, մասնակցեցին հայ և վրաց մտավորականներ, իշխանությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև տարբեր տարիների շրջանավարտ իր բազմահարյուր աշակերտները՝ ծաղկեփնջերով ու վառվող մոմերով:

Հավերժական խաղաղություն սիրված մանկավարժի հոգուն:

ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊՍ. ՍԵՐԱԴԱՐՅԱՆ